ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 139

## ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22122020-06-0020 վկայականը և Բուրաստան Սարգսի Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Բուրաստան Սարգսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շվեյցարական թաղամասում գտնվող 06-006-0200-0018 կադաստրային ծածկագրով 0,037 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա գտնվող 06-006-0200-0018-001 կադաստրային ծածկագրով 78,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան «քաղաք Սպիտակ, Շվեյցարական թաղամաս, թիվ 53» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Շվեյցարական թաղամաս, թիվ 159» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 140

## ՎԱՀԱՆ ԽԱՉԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, հաշվի առնելով, որ Վահան Խաչիկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «ք.Սպիտակ, Այգեստան թաղամաս, թիվ 286» հասցեում գտնվող 06-006-0108-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,09251 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա 1995 թվականին կառուցված բնակելի տունը, կաթսայատունը, պարիսպը, բաց պատշգամբը, մառանը և ավտոտնակը կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1067429 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Վահան Խաչիկի Մանուկյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Վահան Խաչիկի Մանուկյանի (ծնված 15.11.1956թ.) սեփականության իրավունքը իրեն պատկանող՝ «ք.Սպիտակ, Այգեստան թաղամաս, թիվ 286» հասցեում գտնվող 06-006-0108-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,09251 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի տան, կաթսայատան, պարսպի, բաց պատշգամի, մառանի և ավտոտնակի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 141

## ԱԼԻԿ ՍԵԴՐԱԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի և Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի կողմից 2021 թվականի փետրվարի 22-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը Ալիկ Սեդրակի Պողոսյանի կողմից Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ **որոշում եմ.**

1. Ալիկ Սեդրակի Պողոսյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2021 թվականի մարտի 15-ին, ժամը 16:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Ալիկ Սեդրակի Պողոսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.մարտի 10
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 142

## ՍԱՐԳԻՍ ՎԱԼՈՌՅԱՅԻ ԹԱՄԱՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի և Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի կողմից 2021 թվականի փետրվարի 24-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը Սարգիս Վալոդյայի Թամամյանի կողմից Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ **որոշում եմ.**

1. Սարգիս Վալոդյայի Թամամյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2021 թվականի մարտի 15-ին, ժամը 16:30-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Սարգիս Վալոդյայի Թամամյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.մարտի 10
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 143

## ՔԸՐՔ-ՔԸՐՔՈՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ, 13-րդ և 22.1-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Նվեր Նորիկի Բաղալյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Քըրք-Քըրքորյան փողոցի վրա գտնվող 06006 304-89 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,109 հեկտար մակերեսով հողամասի վրա 1989 թվականին ինքնակամ կառուցված 36,9 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարսպի, 2020 թվականին ինքնակամ կառուցված 137,28 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան և 4,3 քառակուսի մետր մակերեսով պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 2089619 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գուքի չափագրման

հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Նվեր Նորիկի Բադալյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Նվեր Նորիկի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Քըրք Քըրքորյան փողոցի վրա գտնվող 06006 304-89 կադաստրային ծածկագրով 0,109 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 137,28 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը և 41,2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Նվեր Նորիկի Բադալյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Քըրք Քըրքորյան փողոց, թիվ 265» հասցեն:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Նվեր Նորիկի Բադալյանին.

1) համայնքի բյուջե վճարել 162 600 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 144

## ՕԴԿԱՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 44 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ, 13-րդ կետերով, հաշվի առնելով, որ Ավետիք Սարոյի Ջուլհակյանին, Անուշ Մանթաշի Շավինյանին, Աիդա Ավետիքի Ջուլհակյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Օդկայան թաղամաս, թիվ 44 հասցեում գտնվող 06-006-0211-0023 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,04 հեկտար մակերեսով հողամասի վրա 2020 թվականին ինքնակամ կառուցված 193,68 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան և 10,56 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 03032014-06-0027 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գուքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Աիդա Ավետիքի Ջուլհակյանի 2021 թվականի հունվարի 20-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ավետիք Սարոյի Ջուլհակյանին, Անուշ Մանթաշի Շավինյանին, Աիդա Ավետիքի Ջուլհակյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Օդկայան թաղամաս, թիվ 44 հասցում գտնվող 06-006-0211-0023 կադաստրային ծածկագրով 0,04 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 193,68 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը և 10,56 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ավետիք Սարոյի Ջուլհակյանի, Անուշ Մանթաշի Շավինյանի և Աիդա Ավետիքի Ջուլհակյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Ավետիք Սարոյի Ջուլհակյանին, Անուշ Մանթաշի Շավինյանին, Աիդա Ավետիքի Ջուլհակյանին.

1) համայնքի բյուջե վճարել 220 375 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 145

## ԱՌԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԴԱՐՉԻՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 0,167 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ, 13-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Ալբերտ Հովհաննեսի Դարչինյանին սեփականության իրավունքով պատկանող Առափնյա փողոցի վրա գտնվող 06006 14-9 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,137 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից ավել օգտագործվող 300 քառակուսի մետր մակերեսով հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա մինչև 1989 թվականին կառուցված 60,53 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 2020 թվականին

ինքնակամ կառուցված 20,21 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկուղը, 109,14 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը և 121,9 քառակուսի մետր մակերեսով ձեղնահարկը կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը և Ալբերտ Հովհաննեսի Դարչինյանի 2021 թվականի հունվարի 29-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ալբերտ Հովհաննեսի Դարչինյանի (ծնված 19.02.1962թ.) սեփականության իրավունքը Առափնյա փողոցի վրա գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,03 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի, դրա վրա գտնվող 60,53 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ալբերտ Հովհաննեսի Դարչինյանին պատկանող Սպիտակ համայնքի Առափնյա փողոցի վրա գտնվող 0,167 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 20,21 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկուղը, 109,14 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը և 121,9 քառակուսի մետր մակերեսով ձեղնահարկը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ալբերտ Հովհաննեսի Դարչինյանի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Առափնյա փողոց, թիվ 192» հասցեն:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

6. Ալբերտ Հովհաննեսի Դարչինյանին.

1) համայնքի բյուջե վճարել 251 129 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 146

## ԾԱՂԿԵՊՍԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 2011 թ. մարտի 11-ի Ճապոնիայի ցունամիի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար ծաղկեպսակ ձեռք բերելու նպատակով՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման, «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 20 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 147

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՐԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 63-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գարիկ Թումանյանի 2021 թվականի մարտի 4-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Գարիկ Թումանյանին (ՀՎՀՀ 66961486) տալ «ք. Սպիտակ, Թումանյան փողոց 41» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 18 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2021 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 10
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2021թ. № 148

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՂՈՒՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 63-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Աղունիկ Մարտիրոսյանի 2021 թվականի մարտի 4-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Աղունիկ Մարտիրոսյանին (ՀՎՀՀ 66003441) տալ «ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 1» հասցեում գտնվող սեղմված բնական գազի լցավորման կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 10
ք. Սպիտակ